ԳԻՆՆ Ե 35 Կ.

633.5
Z-14

# 1931 Թվի

# ԲԱՄԲԱԿԻ ԲԵՐՔԱՀԱՎԱՔԻ ԿԱՄՊԱՆԻԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ յեվ ՏԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՎԵԿԱՊԵ-ի (բ) Անդրյերկրկոմի յեվ ԱՍՖԽՀ ժողկոմխորհի վորոշումը.
2. Ադրկոմկուսի (բ) յեվ ԱԽՍՀ ժողկոմխորհի վորոշումը.

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

AZƏRNƏŞR

Բագու—1931

633.5
Z-14

29 .05. 2013

24 SEP 2010

# 1931 ԹՎԻ ԲԱՄԲԱԿԻ ԲԵՐՔԱՀԱՎԱՔԻ ԿԱՄՊԱՆԻԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՅԵՎ ՏԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ՎԵԿԱ.ՊԵ-ի (բ) Անդրյերկրկոմի յեվ ԱՍՖԽՀ Ժողկոմխորհի վորոշումը

### I

Առաջիկա բամբակահավաքի ու մթերման կամպանիան վճռական տնտեսական-քաղաքական խնդիր ե հանդիսանում ԱՍՖԽՀ բամբակային ռայոնների կուսակցական, խորհրդային, տնտեսական և կոլխոզա-կոոպերատիվ կազմակերպությունների համար։

Սոցիալիստական սեկտորի բավականաչափ գերակշռումը բամբակարուծական ռայոններում, բամբակային տարածությունների աճումը, հնդավոր բամբակի առաջիկա բերքահավաքի անագին աճումը բացառիկ նշանակություն են տալիս բամբակահավաքի և մթերման կամպանիային, վորը պետք ե տարվի կարևորագույն ժողովրդա-տնտեսական խնդրի—Խորհրդային Միության ոտարյերկրյա բամբակային կախումից ազատելու նշանի տակ։

Բամբակամթերման կամպանիան անցնելու ե դասակարգային թշնամու կատաղի ընդդիմադրության պայմաններում. Նա ամեն կերպ աշխատելու ե խանգարել բերքահավաքի—մթերումների պլանի կատարումը։

ՎԵԿԱ.ՊԵ-ի (բ) Անդրյերկրկոմը և Անդրժողկոմխորհը բոլոր կուսակցական, խորհրդային, տնտեսական և կոլխոզա-կոոպերատիվ կազմակերպությունների ուշադրությունը հրավիրում են այն բանի վրա, վոր բերքահավաքի հաջող կատարումը կախված ե կոլխոզային ու անհատական չքավորա-միջակային մասսաների լայն մոբիլիզացիայից՝ սահմանված ժամանակին հնդավոր բամբակի հավաքման ու պետության հանձնելու պլանը կատարելու և գերակատարելու շուրջը։

Անհրաժեշտ ե, վոր բոլոր կուսակցական, խորհրդային, տնտեսական ու կոլխոզա-կոոպերատիվ կազմակերպություններն անհապաղ անցնեն բամբակահավաքի և մթերման կամպանիայի նախապատրաստական միջոցառումները տանելու մարտական, հարվածային տեմպերին, լայնորեն զարգացնելով աշխատանքի սոցիալիստական ձևերը սովխոզներում ու կոլխոզներում և անհատական չքավորա-միջակային տնտեսություններում՝ ամենամեծ չափերով ոգտագործելով բոլոր ունեցած ռեսուրսները։

Կուսակցական, խորհրդային և կոլխոզա-կոոպերատիվ կազմակերպությունները՝ առաջիկա բամբակահավաքի ու մթերման կամպանիայի առթիվ՝ պետք ե անհապաղ ծավալեն լայն մասսայական բացատրական աշխատանք անհատականների բատրակա-չքավորական և միջակային մասսաների մեջ՝ նրանց կոլխոզ գրավելու համար. պետք ե բոլշևիկորեն կապեն բերքահավաքի կամպանիայի պլանների կատարումն ու գերակատարումը գոյություն ունեցող կոլխոզների հետագա ամրապնդման, կոլխոզային շարժման նոր ուժեղ վերելք կազմակեր-

ՀՀ Ազգային գրադարան
NL0288625

Azərbajcan Baş mətbyat mudirliqi № 6274. Sifariş № 719. Tiraƶ 2000. St. f.A6
Azərnəşr mətbəəsində basıldь, Baqь. B.-Morskoj quçəsi № 16/36.

19.182

պելու խնդրի հետ՝ «այնպիսի հաշվով, որ հիմնականում ավարտեն կոլեկտիվացումը 1932 թվին» (ՎԽԿԱՊԽ-ի (բ) Կենտկոմի 1931 թվի օգոստոսի 2-ի վորոշումից)։

## II

Հնդավոր բամբակի առաջիկա բերքի պլանն ԱՍՖԽՀ-ում հաստատել 216,000 տոնն, գյուղացիական սեկտորում—192,450 տոնն ջրովի բամբակ, 1550 տոնն անջրդի և բամբակային սովխոզներում—22,000 տոնն։

| Հանրապետությունները | Ջրովի բամբակ | Անջրդի բամբակ | Սովխոզային բամբակ | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| Խորհրդ. Ադրբեջան | 157,200 | 1,170 | 17,130 | 175,500 |
| » Հայաստան | 25,850 | — | 740 | 26,590 |
| » Վրաստան | 9.400 | 380 | 4,130 | 13,910 |

1931 թվի բերքի հնդավոր բամբակի վերաբերմամբ սահմանել հետևյալ տեսակները և գները՝ բամբակարույծների հետ հաշիվ տեսնելու համար՝—

1-ին տեսակ—78%, մի փութի գինը 5 ր. 11 կոպ.
2-րդ » 12 » » » » 4 ր. 75 »
3-րդ » 10 » » » » 4 ր, 37 »

Կուսակը տեսակներից դուրս ընդունել՝ կիլոգրամը 25 կոպեկով։

Անդրբամբակմիացությունը՝ Անդրկոլխոզկենտրոնի և Անդրտրակտորակենտրոնի հետ միասին՝ համաձայն վերև ընդունված տեսակների՝ վոչ ուշ քան սեպտեմբերի 1-ը պետք է ստանդարտներ մշակի հընդավոր բամբակի համար։

Հիշված կազմակերպությունները 5 օրվա ընթացքում պետք է վորոշեն նաև ընդունվող հնդավոր-բամբակի թացության ու աղտոտության սահմանային նորմաները. և յեթե բամբակարույծները սահմանված նորմայից ավելի թացություն ու աղտոտություն պարունակող հնդավոր բամբակ հանձնեն, գներից պետք է պակասեցնել կիլոգրամին մինչև 3 կոպեկ։

Հնդավոր բամբակի հավաքման ու մթերման համար հետևյալ ժամկետները սահմանել.—սեպտեմբերին—3%, հոկտեմբերին—45%, նոյեմբերին—45% և դեկտեմբերի առաջին կեսին—7 տոկոս, այնպես վոր ամբողջ մթերման կամպանիան վերջանա 1931 թվի դեկտեմբերի 15-ից վոչ ուշ։

Անդրբամբակմիացությունը և Անդրտրակտորակենտրոնը՝ համապատասխան մատնանշված ժամկետներին՝ պետք է մշակեն ռայոնական տասնօրյա պլաններ ու դրանց հանրապետական ժողկոմխորհների կողմից հաստատելուց հետո հասցնեն ռայոնները և մեքենա-տրակտորային կայանները՝ օգոստոսի 15-ից վոչ ուշ։

Ռայկուսկազմակերպությունները և ռայգործկոմները՝ մեքենատրակտորային կայանների հետ միասին՝ բերքահավաքի կամպանիայի պլանները պիտի հասցնեն գյուղին, կոլխոզին ու արտադրական ընկերությանը՝ վոչ ուշ սեպտեմբերի 1-ից։

Առաջարկել բոլոր ռայկուսկազմակերպություններին և ռայկոլխոզմիություններին, բերքահավաքի պլանի քննությունը կապել ամեն մի կոլխոզի համար բերքահավաքի ժամանակաշրջանի կոնկրետ աշխա-



ГОС. БИБЛИОТЕКА
Арм.ССР

տանքային պլան կազմելու հետ ու սեպտեմբերի 1-ից վոչ ուշ լիովին պատրաստել տարան, փոխադրական միջոցները, նույնպես և ջոկել համապատասխան ղեկավար-բրիգադիրներ ու կազմակերպել համապատասխան հրահանգումը։

## III

Բերքահավաքի կամպանիան հաջող տանելու կարևորագույն պայմաններից մեկը հանդիսանում է ամբողջ բանվորական ուժի լիակատար օգտագործումը սովխոզներում, կոլխոզներում և անհատական տնտեսություններում՝ աշխատանքի լավագույն կազմակերպման հիման վրա, մշակման ուղիղ նորմաների սահմանումը և բոլոր բամբակային ռայոններում բոլոր աշխատանքներում գործարքայնություն մտցնելը, իսկապես կատարած աշխատանքի քանակի ու վորակի ճիշտ հաշվառը, աշխատանքի սոցիալիստական ձևերի լայն կիրառումը (սոցմրցում, հարվածայնություն, հասարակական բուքսիր)։

Անդրհողժողկոմատը և Անդրկոլխոզկենտրոնը՝ հանրապետական կազմակերպությունների հետ միասին, պետք է մինչև բերքահավաքի կամպանիայի սկիզբը ապահովեն գործարքայինի լիակատար արմատավորումը կոլխոզների բոլոր տեսակի բերքահավաքի աշխատանքերում։

Անդրհողժողկոմատը, Անդրկոլխոզկենտրոնը և Անդրտրակտորակենտրոնը օգոստոսի 20-ից վոչ ուշ պետք է մշակեն բերքահավաքի կամպանիայի բոլոր տեսակի աշխատանքների մշակման նորմաները՝ բոլոր քաղերի համար, պայքարելով նվազագույն նորմաների դեմ, վորոնք փաստորեն կազմալուծում են կոլխոզնիկների լայն մասսաներին։

Բոլոր քաղերի բամբակահավաքի աշխատանքների համար վորոշել աճող գնահատում աշխատօրերով։ Կոլխոզների վարչությունները պետք է ամեն մի բամբակային հողամասը և ինվենտարն ամրապնդեն առանձին բրիգադայի՝ քաղի ամբողջ ժամանակաշրջանում։

Պարտավորեցնել կոլխոզների վարչություններին ամեն մի քաղից հետո ստուգելու բրիգադաների կատարած աշխատանքի վորակը, աշխատանքի լավ վորակի և ժամանակին կատարելու համար սահմանել պրեմիաներ՝ աշխատօրերի լրացուցիչ հավելման ձևով՝ 25%-ի չափով, ժամանակին չկատարելու և վատ վորակի համար—իջեցնել աշխատօրերը։

ՎԽԿԱՊԽ-ի (բ) Անդրյերկրկոմը և Անդրժողկոմխորհը մատնանշում են, վոր մի շարք ռայկազմակերպություններ մինչև այժմ թերագնահատում են կանանց-կոլտնտեսուհիների և անհատականների—աշխատանքի կազմակերպման ու մեծագույն չափերով օգտագործելու հարցի հսկայական քաղաքական նշանակությունը։

Ռայոնական կուսակցական, խորհրդային և կոլխոզային կազմակերպությունների լայն մասսայական աշխատանքը, կոլխոզների բոլոր տեսակի գյուղատնտեսական աշխատանքներում կանանց աշխատանքն օրինաչափ կիրառումը, ապահովելու համար վճռական միջոցառումների կիրառումը, սարմատավորելու համար (մանկական մսուր-ցիալ-կենցաղային հիմնարկների լայն ծավալումը (մանկական մսուրներ, պարտեզներ, հասարակական ճաշարաններ, հասարակական սնունդ և այլն) հիմնական պայմաններից մեկն են հանդիսանում՝ բամբակահավաքի կամպանիայի հաջող դաշտային աշխատանքների ժամանակ կատարման համար։

Առաջարկել կուսակցության կենտկոմներին ու ռայկոմներին, Անդրկոլխոզկենտրոնին և հանրապետությունների կոլխոզկենտրոններին՝ անհապաղ աշխատանք ծավալել կազմակերպելու մանկական հիմնարկներ բամբակային ռայոններում այնպիսի հաշվով, վոր նրանք ընդգրկեն հիմնականում բոլոր կոլխոզները։

Անդրբամբակմիացությունն անհապաղ պետք ե պարզի, թե վոր-
քան բանվորական ուժ կա սովխոզներում, ճշտիվ վորոշելով, թե ամեն
մի առանձին սովխոզում վորքան բանվորական ուժ ե պակասում.
Պարտավորեցնել սովխոզների դիրեկտորներին՝ կոլխոզների հետ պայ-
մանագիր կապելու հիման վրա՝ ժամանակին ավարտելու բանվորական
ուժ հավաքելը—բերքահավաքի կամպանիայի պլանը լրիվին կատարելն
ապահովելու համար:

Անդրաշխժողկոմատը՝ Անդրբամբակմիացության և Անդրկոլխոզ-
կենտրոնի հետ միասին՝ պետք ե 5 որվա ընթացքում վորոշի բանվո-
րական ուժ հավաքելու ռայոնները: Բանվորական ուժ հավաքելու ռա-
յոնների ռայկոմները, նույնպես և կոլխոզային սիստեմը պետք ե այդ
աշխատանքում ամեն կերպ աջակցեն բամբակային սովխոզներին:

Սովխոզների բոլոր կուսկազմակերպությունները ու դիրեկտորները
մինչև քաղի սկիզբը պետք ե գյուղատնտեսական աշխատանքների բո-
լոր ձևերը իսկական գործարքայինի վերածեն, սահմանելով մշակման
վորոշ նորմաներ և աշխատանքի վճարման նորմաները հասցնեն ագա-
րակին, հողամասին և բանվորին՝ աշխատելով աշխատանքի արտադրո-
ղականությունն ամենամեծ չափով բարձրացնելու:

Ադրբամբակմիացությունը պետք ե բոլոր միջոցները ձեռք առնի,
վոր արագացվի Անդրկովկասի համար ինկատի առնված բամբակաքա-
ղի մեքենաների ներմուծումը: Այդ մեքենաները բաժանելիս ապահո-
վել, վոր դրանք ամենամեծ քանակությամբ տրվեն բամբակային
սովխոզները: Բամբակաքաղի մեքենաների ներմուծումը ուղղակի կախ-
ման մեջ դնել այդ ռայոնները բանվորական ուժով բեռնավորված լի-
նելու հետ:

Ջակսնաբը և Ջոկսայուզը բամբակահավաքի կամպանիայի ժամա-
նակաշրջանում պետք ե ապահովեն սովխոզների բանվորներին անընդ-
հատ մատակարարումով և լավացնեն հասարակական սնունդի կազմա-
կերպումը: Սովխոզների դիրեկտորներն իրենց փոխանորդներից մեկին
հատկապես պետք ե նշանակեն այդ աշխատանքի համար:

## IV

Անդրտրակտորակենտրոնը պետք ե ապահովի մեքենա-տրակտորա-
յին կայանների կազմակերպչական-տեխնիկական նախապատրաստու-
թյունը, վորոնք հնդավոր բամբակի հավաքման ու տեղափոխման կազ-
մակերպման հիմնական կազմակերպիչներից մեկն են հանդիսանում:
Միաժամանակ ռայկուսկազմակերպությունները պետք ե լավացնեն
մեքենա-տրակտորային կայանների ղեկավարությունը՝ նրանց աշխա-
տանքում բոլոր անհրաժեշտ պայմանները ստեղծելով՝ բամբակի հա-
վաքման պլանի հաջող կատարման համար:

Անդրտրակտորակենտրոնի վրա պատասխանատվություն ե դրվում
կազմակերպելու իրա կողմից սպասարկվող կոլխոզների ու արտադրա-
կան ընկերությունների բամբակի հանձնումը (վաճառքը). Անդրտրակ-
տորակենտրոնը պատասխանատու ե նաև սպասարկվող կոլխոզների ու
արտադրական միությունների բամբակի հանձնման պլանի կատարման
համար՝ համաձայն պայմանագրերի: Անդրբամբակմիացության վրա
պատասխանատվություն ե դրվում՝ կոլխոզների ու արտադրական ըն-
կերությունների հանձնած բամբակի համար ժամանակին թե դրամա-
կան և թե բնականով վճարումներն անելու, նաև կանխավճարներն ու
պարտքերը հանելու վերաբերմամբ:



Առաջարկվում ե Անդրբամբակմիացությանը, Անդրտրակտորակենտ-
րոնին ու բամբակաբուծական կոոպերացիային՝ տասնորյա ժամկետում
ավարտել հանձնելն ու ընդունելը բամբակաբուծական կոոպերացիայից
բոլոր պայմանագրերի, վոր կնքված են բամբակաբույծների հետ ըն-
թացիկ տարում: Պայմանագրերը պետք ե կենտրոնացնել Անդրբամբակ-
միացության սիստեմի գնման կետերում:

Պետբանկին պարտավորացնել, վոր ժամանակին հաշվետես դրամ-
արկղներ բանա գնման կետերում: ՎԵԿԱՊԲ-ի (բ) Անդրյերկրկոմի կա-
դրերի բաժինը հաշվետես դրամարկղները պետք ե ապահովի համա-
պատասխան գործիչներով:

Մատնանշելով, վոր հնդավոր բամբակ ընդունելու կետերում հաշ-
վառի ու հաշվետվության սիստեմը չափազանց ծանրաբեռնված ե և
բամբակաբույծների հետ յեղած հաշվետեսության ձևերը բարդ են, ա-
ռաջարկվում ե Անդրբանդյուղտեխչությանը՝ Անդրբամբակմիացության
հետ միասին մինչև ոգոստոսի 20-ը վերանայել ընդունող կետերի հաշ-
վառի ու հաշվետվության գոյություն ունեցող ամբողջ սիստեմը և
պարզել ամբողջ տեխնիկան՝ սահմանելով ընդունելու հասարակ կարգ:

Առաջարկվում ե Անդրբամբակմիացությանը 55 մշտապես գործող
գնման կետերի ցանց սահմանել, բացի դրանից նաև 15 շարժական
կետ ունենալ: Հնդավոր բամբակը բերելու շառավիղը 15 կիլոմետր ե
սահմանվում:

10 կիլոմետրից ավելի յեղած փոխադրության արժեքը պիտի վճա-
րի Անդրբամբակմիացությունը:

Ինկատի առնելով գնման կետերի ու բամբակային սրահների կա-
ռուցման ձգձգումը՝ առաջարկվում ե Անդրբամբակմիացությանը 5 որ-
վա ընթացքում պարզելու պահանջվող փայտեղենի և այլ նյութերի
քանակն ու ապահովել առաջին հերթին այդ կառուցումներն ստացվող
փայտեղենով: Միաժամանակ պարտավորացնել հանրապետությունների
ժողկոմխորհներին ապահովելու, վոր Անդրբամբակմիացության տրա-
մադրության տակ դրվեն բամբակային կոոպերացիայի պահանջագրե-
րի համաձայն առանձնացված ֆոնդերը՝ բամբակային սրահների կա-
ռուցման համար:

Հնդավոր բամբակի հանձնումը պարզացնելու և հեշտացնելու նպա-
տակով առաջարկել Անդրբամբակմիացությանն ու Անդրտրակտորա-
կենտրոնին ամրացնելու գնման կետերին առանձին կոլխոզներն ու
արտադրական ընկերությունները, չխախտելով վարչական ռայոնների
սահմանները:

Փոխել բարդանները բամբակաբույծներին վաճառելու սիստեմը,
կարգ սահմանելով, վոր բարդանները տրվեն հնդավոր բամբակը հա-
վաքելու և հանձնելու նպատակով ժամանակավոր ոգտագործման հա-
մար: Անդրբամբակմիացությունը պետք ե ապահովի, վոր բարդաննե-
րը տրվեն բամբակաբույծներին համաձայն բերքի, ամեն մի բարդա-
նի համար 4 շրջանառություն հաշվելով և չվերադարձնելու դեպքում
տուգանք սահմանելով:

## V

Մատնանշելով, վոր անցած տարի՝ շնորհիվ ռայոնական խորհրդա-
յին կազմակերպությունների անպատասխանատու վերաբերմունքի՝
բամբակի բավական մեծ տոկոս անասուններն արածել են, այդ բանը
չկրկնելու համար, առաջարկել հանրապետությունների ժողկոմխորհնե-
րին 20 որվա ընթացքում վերանայելու՝ արածացնելու դեմ պայքարե-

լու նպատակով հանած իրենց վորոշումները և մեծացնելու տեղական, ռայոնական ու գյուղական ադմինիստրացիայի և արածացնողների պատասխանատվությունը մինչև իսկ կուլակային ունեվոր տնտեսությունների չարամիտ արածացնող գույք բռնագրավելու:

Հաստատել Անդրժողկոմխորհի 1930 թ. սեպտեմբերի 24-ի վորոշումը «հնդավոր բամբակի նստելու դեմ պայքարելու մասին», բամբակարույծներին բամբակի լինտեր բաց թողնելու կարգ սահմանել՝ գնման կետերի միջոցով, ամեն մի տնտեսությանը միջին հաշվով 3 կիլոգրամ տալ:

Առաջարկել Անդրբամբակմիացությանը տասնօրյա ժամկետում Անդրժողկոմխորհին ներկայացնելու՝ բամբակը չարամտորեն չհանձնողների, պայմանագրերի կատարումից խուսափողների դեմ պայքարելու միջոցառումների վորոշման նախագիծ:

Պարտավորացնել բամբակային ռայոնների կուսակցության ռայկոմներին և ռայգործկոմներին սիստեմատիկ խիստ հսկողություն սահմանելու, վոր կուլակային ունևոր տնտեսությունները հնդավոր բամբակը հանձնելու մասին իրենց տրված հաստատուն առաջադրությունները ժամանակին լրիվին կատարեն:

## VI

Մատնանշելով բամբակային ռայոնների ճանապարհների չափազանց վատ դրությունը, մանավանդ, Սալյան-Մուղանի ռայոնում ու դաշտային Ղարաբաղում, և թե դեպի սովխոզները տանող ու ներսովխոզային ճանապարհների համար լիակատար բացակայությունը, վորը լուրջ վտանգ է հանդիսանում հնդավոր բամբակը ժամանակին գնման կետերը և բամբակային գործարանները փոխադրելու համար ու մատնանշելով, թե Անդրբամբակմիացության և թե Զակդորտրանսի ու հանրապետությունների ժողկոմխորհների, նույնպես և ռայոնական խորհրդային ու կուսկազմակերպությունների համապատասխան ուշադրության բացակայությունը՝ բամբակային ռայոնների ճանապարհային շինարարության վերաբերմամբ, Անդրյերկրկոմն ու Անդրժողկոմխորհին առաջարկում են.—

ա) Զակդորտրանսը և հանրապետությունների ժողկոմխորհները անհապաղ պիտի սկսեն բամբակային ռայոնների հանրապետական նշանակության խճուղիների ու կամուրջների նորոգումը, այն հաշվով, վոր այդ աշխատանքներն ավարտեն սեպտեմբերի 15-ից վոչ ուշ:

ԱՍՖԽՀ կազմի մեջ մտնող հանրապետությունների ժողկոմխորհները պիտի հրատարակեն համապատասխան վորոշում, վորը պարտավորեցնի ռայգործկոմներին մշակման աշխատանքները վերջացնելուց հետո և մինչև բերքահավաքի կամպանիայի սկիզբը՝ աշխատանքային պարտիք ու յերկուշաբաթյակ կազմակերպելու միջոցով նորոգելու բոլոր ճանապարհները, նաև կամուրջներն ու կառանները (պրիչալ) գնման կետերի և բամբակագործարանների ռայոններում:

բ) Սովխոզբամբակը տասն որվա ընթացքում պիտի պայման կապի Զակդորտրանսի հետ՝ ներսովխոզային ճանապարհներ կառուցելու մասին: Կարա-Չալայի, Միլի, Ազիզբեկովի, Ալազանի ու Սաբիրաբադի սովխոզներում այդ աշխատանքները պետք է ապահովեն անհրաժեշտ միջոցներով այն գումարներից, վոր նախատեսնված են սովխոզների շինարարության պլաններով:

Պարտավորեցնել Զակդորտրանսին, վոր ավարտեն դեպի սովխոզ տանող ու ներսովխոզային ճանապարհների կառուցումը, նույնպես և



Աղջաբեդու և Նաջափ-Կուլի-Բեգլիի միջև ճանապարհի կառուցումը (14 կիլոմետր) սեպտեմբերի 26-ից վոչ ուշ: Վերջինիս կառուցումը կատարել Խորհրդային Ադրբեջանում ճանապարհներ կառուցելու վարկերի հաշվին:

գ) Անդր. Ժող. Տնտ. Գերագույն Խորհուրդը և Անդրլեսբումտրեստը պետք է ապահովեն հերթից դուրս փայտեղեն բաց թողնելը Զակդորտրանսի պահանջագրերով՝ վերոհիշյալ ճանապարհներն ու կամուրջները նորոգելու և կառուցելու համար:

Անդտրանսպորտկենտրոնը և կոլխոզային սիստեմը պետք է կազմակերպեն փոխադրական միջոցներ՝ հնդավոր բամբակը դաշտերից ընդունման կետերը տանելու համար և պետք է մասնակցեն սայլատրանսպորտ կազմակերպելուն՝ բամբակն ընդունման կետերից բամբակագործարանները փոխադրելու համար:

Անդրբամբակմիացությունն անհապաղ պիտի սկսի կազմակերպել սայլատրանսպորտ՝ բամբակային ռայոնների կոլխոզների ու անհատական գյուղացիական տնտեսությունների քարշուժերը պայմանագրելու միջոցով, նույնպես և միջոցներ պիտի ձեռք առնեն գրավելու ազատ քարշուժերը վոչ բամբակային ռայոններից: Սեպտեմբերի 15-ից վոչ ուշ բամբակագործարանների ու գնման կետերի կից կազմակերպել նորոգման վոչ մեծ արհեստանոցներ՝ տրանսպորտի միջոցների ընթացիկ նորոգման համար: Անդրմատակարարման ժողկոմատը պետք է այդ արհեստանոցներն ապահովի անհրաժեշտ քանակությամբ տեսակային ու անվաշրջանակային յերկաթով ու փայտեղենով՝ Անդրբամբակմիացության դիմումների համաձայն:

Զակդորտրանսը պիտի ավտոխմբեր կազմակերպի ունեցած, նույնպես և ստացվող ավտո-մաշիններից և, առաջին հերթին, ապահովի Յեվլախ-Աղջաբեդի ճանապարհի սպասարկումը:

Զակրեչտրանսը պետք է ապահովի Քուրի վրա անհրաժեշտ քանակությամբ տոննաժ՝ անընդհատ ու ժամանակին տեղափոխելու համար բամբակը և բամբակամթերման կամպանիայի հետ կապված այլ բեռները: Միաժամանակ ապահովել Քուրի ափին՝ բամբակային բեռներն ընդունելու և թափելու տեղերում նավակայաններն ու կառանները ժամանակին նորոգելու և կառուցելու գործը:

Անդրյերկաթուղու դիրեկցիան պետք է ապահովի անընդհատ կերպով անհրաժեշտ քանակությամբ վագոններ տալը՝ բամբակային բեռները ժամանակին տեղափոխելու համար:

ԱՍՖԽՀ կազմի մեջ մտնող հանրապետությունների ժողկոմխորհներին առաջարկել՝ օգոստոսի 15-ից վոչ ուշ համապատասխան վորոշումը հրատարակելու—կուլակային-ունևոր տնտեսությունների տրանսպորտային միջոցները մոբիլիզացիայի յենթարկելու կարգի մասին՝ տրանսպորտային օգնություն հասցնելու համար թե կոլխոզային և թե անհատական կարիք ունեցող տնտեսություններին:

Ի նկատի առնելով բամբակային ռայոններում, մանավանդ սովխոզներում, փոխադրական միջոցների սուր կարիքը՝ խնդրել ՎԵԿԱ-ՊԵ-ի (բ) Կենտկոմին և Խորհ. Միության Հողժողկոմատի կոլլեգիային ապահովելու 100 ավտոմաշինից վոչ պակաս Անդրկովկաս ներմուծումը՝ մինչև բամբակաքաղի սկիզբը, այն ավտոմաշիններից, վոր նշանակված են Միության բամբակային ռայոնների համար—բամբակաքաղի կամպանիայի ժամանակաշրջանում:

Առաջարկել Անդրմատակարարման ժողկոմատին՝ առանձնացնելու անհրաժեշտ քանակությամբ հատիկային կեր հաստատուն գներով:

Հատիկային կերի պահանջվող քանակի հաշվին դրահավորել 20,000 տոնն թեփ և 2,000 տոնն բամբակային քուսպ։ Անդրբամբակմիությունը տասն օրվա ընթացքում իր պահանջը պիտի ներկայացնի Մատակարարման ժողկոմատին՝ հատիկային կերի պահանջվող քանակի վերաբերմամբ։

## VII

Մատնանշելով, որ մշակման կամպանիայի ժամանակաշրջանում բամբակ ցանողներին հաց ու արդյունաբերական ապրանք անբավարար կերպով են մատակարարվել, առաջարկել Անդրմատակարարման ժողկոմատին, Սոյուզխլեբի Անդրգրասենյակին ապահովելու հացի ժամանակին ներմուծումը բամբակային ռայոնները բերքահավաքի կամպանիայի ընթացքում՝ համաձայն Անդրբամբակմիության ներկայացրած պլանի, այնպես վոր մինչև սեպտեմբերի 15-ը ներմուծվի ամբողջ կամպանիայի համար պահանջվող հացի քանակի կեսից վոչ պակաս (19,200 տոնն) և մինչև հոկտեմբերի 1-ը մնացած քանակությունը—19,200 տոնն։

Առաջարկել Անդրմատակարարման ժողկոմատին և Զակսոյուզին բամբակային ռայոնները ներմուծել հետևյալ արդյունաբերական ապրանքները.—

| | | | |
|---|---|---|---|
| չթեղեն | — | 9,466,000 | ռուբլու |
| շաքար | — | 1,740,000 | » |
| թեյ | — | 548,000 | » |
| բամբակի ձեթ | | 70,000 | » |
| լվացքի սապոն | | 225,000 | » |
| կրկնակոշիկ | | 957,000 | » |
| կաշվե ապրանքներ | | 304,000 | » |
| կոշկեղեն | | 3,915,000 | » |
| այլ արդյուն. ապրանքներ | | 5,123,000 | » |
| Ընդամենը | — | 22,349,000 | ռուբլու |

Առաջարկել Անդրմատակարարման ժողկոմատին և Զակսոյուզին ամենամեծ չափով ապահովելու ներմուծվող ապրանքների շեշտը՝ գյուղացիական բնակչության պահանջների համապատասխան։ Ներմուծումը պիտի կատարվի առանց ընդհատումների՝ հնդավոր բամբակը հավաքելու ու գնման կետերին հանձնելու համապատասխան։

Առաջարկել Անդրմատակարարման ժողկոմատին, Անդրբամբակկոմին, Անդրկոլխոզկենտրոնին և Զակսոյուզին տասն օրվա ընթացքում Անդրժողկոմխորհի հաստատմանը ներկայացնելու բամբակարույծներին արդյունաբերական ապրանքներն անմիջապես հասնեն սպառող—բամբակարույծին։

## VIII

Հաշվի առնելով, վոր հնդավոր բամբակի գնման աշխատանքի ծավալը մեծանում է, դրա շնորհիվ էլ մեծանում է բամբակազտիչ գործարանների բեռնավորումը, նաև բարձրանում են մշակման վորակի վերաբերմամբ յեղած պահանջները, առաջարկել Անդրբամբակմիությանը մարտական պատրաստության մեջ դնելու բամբակազտիչ գործարանները մինչև ռեալիզացիայի կամպանիայի սկիզբը, մինչև այդ ժամկետն ավարտելու նորոգման-շինարարական-վերակառուցման աշխատանքները բամբակազտիչ բոլոր գործարաններում։



Վորպեսզի բամբակազտիչ գործարանները հաջողությամբ կատարեն արտադրական ծրագիրը, առաջարկել կուսկազմակերպություններին՝ ուժեղացնելու ուշադրությունը և գործարանների կուսղեկավարությունը։ Պարտավորացնել Անդրմատակարարման ժողկոմատին ու Անդրսոյուզին, ապահովելու բամբակազտիչ գործարանների անընդհատ մատակարարումը։ Պարտավորեցնել Անդրբամբակմիությանը՝ ժամանակին լրացնելու բոլոր գործարանների բանվորական ուժի, մանավանդ նրա վորակյալ մասի կազմը։

## IX

Բամբակահավաքի պլանի կատարման, բամբակը ժամանակին հավաքելու և պետությանը հանձնելու հաջողությունը պահանջում է ռայոնական և գյուղական կուսկազմակերպություններից, նույնպես և ռայգործկոմներից ու գյուղխորհուրդներից՝ անհապաղ վերակառուցելու աշխատանքները—իրենց աշխատանքի բովանդակությունն ու մեթոդները բամբակահավաքի կամպանիայի խնդիրներին հարմարացնելու տեսակետից։

Բամբակային ռայոններում կուսակցության ռայկոմները վերակառուցելով աշխատանքը, պետք է կոնկրետ կուսղեկավարությունն ապահովեն՝ գյուղական կուսկազմակերպությունների, կոլխոզների, մեքենատրակտորային կայանների, բամբակային սովխոզների բջիջների վերաբերմամբ։ Գյուղական կուսկազմակերպությունների ամբողջ աշխատանքի ծանրության կենտրոնը բամբակը հավաքելու ժամանակաշրջանում պետք է անմիջապես դաշտ, բամբակ հավաքողների բրիգադներն ու խմբակները փոխադրվի։

Կուսակցության ռայկոմները և գյուղական կուսկազմակերպությունները պետք է լայն մասսայական հասարակական քաղաքական աշխատանք ապահովեն անհատական բատրակա-չքավորական ու միջակային տնտեսությունների մեջ, վճռականորեն պայքարելով բամբակահավաքի կամպանիայում անհատական սեկտորի թերագնահատման տրամադրությունների դեմ։ Ամբողջ քաղմասսայական աշխատանքի բոլոր մեթոդները և բովանդակությունը յենթարկելով բամբակահավաքի կամպանիայի արտադրական խնդիրներին, գոյություն ունեցող կոլխոզների ամրապնդմանը և կոլեկտիվացման տեմպերի հետագա վերելքին,—գյուղական կուսկազմակերպությունները պետք է անխնա պայքար մղեն դեմոբիլիզացիոն տրամադրությունների յերևույթների դեմ, ինչ ձևով էլ վոր դրանք յերևան գալու լինեն, վորոնք բամբակահավաքի և մթերման կամպանիայի աջ ոպորտունիստական թերագնահատման հետևանք են հանդիսանում։

ՎԵԿԱՊԵ-ի (բ) Անդրյերկրկոմը և Անդրժողկոմխորհն առաջարկում են կուսակցության ռայկոմներին՝ բոլոր ռայոններում լայն բատրակա-չքավորական կոնֆերանսներ գումարել՝ նվիրված բամբակահավաքի կամպանիայի հարցերին, մեքենատրակտորային կայանների գյուղատնտեսական հողամասերում կազմակերպել լայն կոլխոզային կոնֆերանսներ, իսկ մեքենա-տրակտորային կայաններին կից-խորհուրդների հատուկ ժողովներ՝ բամբակի քաղի և մթերման հարցերի վերաբերմամբ։

Անդրպրոֆխորհուրդը, հանրապետական պրոֆխորհուրդները՝ մեքենա-տրակտորային կայանների բանվորների, բատրակների ու հողագործական սովխոզների բանվորների պրոֆմիության հետ միասին՝ պետք է ակտիվ մասնակցություն ցույց տան բերքահավաքի կամպա-

նիան տանելուն՝ պատասխանատու գործիչներին ամրացնելով բամբակային սովխոզներին, մեքենա-տրակտորային կայաններին և ռայոններին՝ ստորին պրոֆկազմակերպություններին ոգնելու համար։

Կինոյի և ռադիոկազմակերպությունների աշխատանքն առաջիկա ժամանակաշրջանում տանել բամբակի հավաքման կամպանիայի, կոլխոզներում ու սովխոզներում աշխատանքը կազմակերպելու հարցերը ժողովրդականացնելու ուղղությամբ։

Անդրկովկասյան, հանրապետական և ռայոնական բոլոր թերթերը պետք է անհապաղ լայն կամպանիա սկսեն՝ բամբակի հավաքման ու մթերման հարցերի շուրջը, սիստեմատիկ կերպով այդ կամպանիայի ընթացքը լուսաբանելով։ «Զարյա Վոստոկա»-ն պետք է սիստեմատիկ տեսություններ զետեղի, թե հանրապետական և ռայոնական մամուլը ինչպես է մասնակցում բամբակահավաքի կամպանիային։

Բոլոր կազմակերպությունների բազմակողմանի նախապատրաստությունը բամբակահավաքի և մթերման կամպանիայի համար, կոլխոզնիկների ու չքավորա-միջակային մասսաների աճող արտադրական էնտուզիազմի լրիվին ոգտագործումը, նաև վճռական պայքարը կուլակի ընդդիմադրության դեմ—կապահովեն բամբակամթերման կամպանիայի ամենահաջող ելքը, նոր առաջխաղացում առաջ կբերեն կոլեկտիվացման բնագավառում և կարագացնեն բամբակային ռայոնների համատարած կոլեկտիվացումն ու դրա հիման վրա կուլակի—վորպես դասակարգի լիկվիդացիան։

Բարձրացնելով կոլխոզային ու չքավորա-միջակային մասսաների դասակարգային զգաստությունը, էլ ավելի համախմբելով նրանց կուսակցության ղեկավարության տակ՝ կուլակության դեմ վճռական հարձակում տանելու համար, անխնա պայքարելով աջ և «ձախ» ոպորտունիստների — կուլակների ագենտուրայի դեմ՝ բամբակային ռայոնների կուսակցական և խորհրդային կազմակերպությունները պետք է ապահովեն 1931 թվի բամբակի բերքի հավաքման ու մթերման պլանների բոլշևիկյան կատարումը և գերակատարումը։

X

Առաջարկել Անդրբանդյուղտեխչությանը՝ համապատասխան ներկա վորոշման՝ մինչև սեպտեմբերի 1-ը ստուգելու բամբակային կազմակերպությունները, թե նրանք ինչպես են պատրաստված բերքահավաքի կամպանիայի համար։

ԱՍՖԽՀ Ժողկոմխորհի նախագահ՝ Մ. Որախելաշվիլի

ՎԵԿԱՊԵ-ի (բ) Անդրյերկրկոմի քարտուղար՝ Լ. Քարթվելիշվիլի

---



# 1931 ԹՎԻ ԲԱՄԲԱԿԻ ԲԵՐՔԱՀԱՎԱՔԻ ԿԱՄՊԱՆԻԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՅԵՎ ՏԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## Ադրկոմկուսի (բ) կենտրոնական կոմիտեի յեվ Խորհրդային Ադրբեջանի ժողկոմխորհի 1931 թվի սեպտեմբերի 1-ի վորոշումը

Ադրկոմկուսի (բ) կենտրոնական կոմիտեն ու Ադրբեջանի ժողկոմխորհը բոլոր կենտրոնական ու ռայոնական կազմակերպությունների ուշադրությունն են դարձնում բամբակի բերքը հավաքելու և մթերելու առաջիկա կամպանիայի վրա, վոր 1931 թվի բամբակի բոլշևիկյան բերքի համար տարվող լարված պայքարն է ավարտում։

Ամեն կողմից նախապատրաստվելը, կոլխոզային, չքավոր-միջակ բամբակացան մասսաների ակտիվ մոբիլիզացիան բամբակաքաղի կամպանիայի շուրջը, բամբակաքաղի կամպանիան կոլխոզային շարժման հետագա աճման հետ կապելն ու այդ շարժումն ամրապնդելը՝ համաձայն ՎԵԿԱՊԵ-ի (բ) կենտրոնական կոմիտեի հունիսյան պլենումի ցուցմունքների, վճռական հարձակում գործելը կուլակության դեմ,—այս բոլորն առաջիկա կամպանիայի հաջողության հիմնական գրավական է հանդիսանում։

Բամբակաքաղի կամպանիան կատարելու համար ձեռք առնված բոլոր միջոցները պետք է նպաստեն կոլխոզների կազմակերպչական-տնտեսական ամրապնդմանը և դրա հիման վրա՝ կոլխոզային շարժման հետագա աճմանն ու հիմնական բամբակային ռայոններում համատարած կոլեկտիվացումն ավարտելուն և այդ հիման վրա կուլակությունը—վորպես դասակարգ վոչնչացնելուն 1932 թվից վոչ ուշ։

Այդ միջոցառումները կենսագործելու ու ՎԵԿԱՊԵ-ի (բ) Անդրյերկրկոմի ու Անդրժողկոմխորհի հրահանգների հիման վրա՝ Ադրկոմկուսի (բ) Կենտրոնական Կոմիտեն ու Խորհ. Ադրբեջանի ժողկոմխորհը վորոշում են.

1) Յելնելով փաստորեն պայմանագրված տարածությունից, սովխոզների ու անջրդի ռայոնների տարածություններից՝ հնդավոր բամբակ հավաքելու և մթերելու ընդհանուր պլանը հաստատել 175.500 տոնն։

2) Մի հեկտարից միջին բերք հաշվելով 8,11 ցենտներ՝ գյուղացիական սեկտորից ջրովի հնդավոր բամբակի բերքահավաք սահմանել 157.247 տոնն, վորից՝ կոլխոզները—100.480 տոնն և չքավոր-միջակային անհատական տնտեսությունները—50.622 տոնն, կուլակային—ունևոր տնտեսությունների սեկտորը—6,145 տոնն։

Ռայոնների համար բամբակի բերքը հավաքելու և մթերելու հետևյալ պլանը սահմանել.—

# 1931 ԹՎԻ ԲԵՐՔԻ ՀՆԴԱՎՈՐ ԲԱՄԲԱԿԻ ՊԼԱՆԸ

| Ռայոնների անունները | Ռայոնում | | | | | Կոլխոզներում | | | Չքավոր-միջակային տնտեսություններում | | | Կուլակային-ունևոր տնտեսություններում | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Պայմանագրված և հեկտար և պարտավորված | Կարկտահար և յեղած | Բերքահավաքի տարածությունը | Բերքը մեկ հեկտարից ցենտներներով | Հնդավոր բամբակի քաղը տոններով | Բերքահավաքի տարածությունը | Բերքը մեկ հեկտարից ցենտներներով | Հնդավոր բամբակի քաղը տոններով | Բերքահավաքի տարածությունը | Բերքը մեկ հեկտարից ցենտներներով | Հնդավոր բամբակի քաղը տոններով | Բերքահավաքի տարածությունը | Բերքը մեկ հեկտարից ցենտներներով | Բերքահավաքի տարածությունը |
| Կարասուի | 3195,5 | — | 3195,5 | 7,06 | 2257,6 | 2480 | 7,01 | 1760,8 | 676,8 | 6,9 | 466,8 | 39 | 7.7 | 30,0 |
| Աղդաշի | 15681,0 | 113 | 15568,0 | 8,03 | 12510,2 | 7643 | 8,11 | 6198,5 | 7199 | 7.88 | 5672,8 | 726 | 8,8 | 638.9 |
| Բյուրդամիրի | 9633,0 | — | 9633,0 | 8,19 | 7892,8 | 6022 | 8,29 | 4992,2 | 3114 | 7,91 | 2463.2 | 497 | 8,8 | 437,4 |
| Գյոգչայի | 19468,0 | 880 | 18588,0 | 8,12 | 15101,6 | 9155 | 8,27 | 8571,2 | 8738 | 7,91 | 6911,7 | ·695 | 8,9 | 618,6 |
| Բելասուվարի | 8070,0 | — | 5070,0 | 6,91 | 3504,5 | 2095 | 7,0 | 1466,5 | 2578 | 6,75 | 1440.2 | 397 | 7,5 | 297.8 |
| Սալյանի | 13559,0 | — | 13559,0 | 7,16 | 9714,2 | 9989 | 7,2 | 7192,4 | 2916 | 6,9 | 2012,0 | 654 | 7,8 | 510,1 |
| Սաբիր Աբադի | 18009,0 | — | 18009,0 | 7,04 | 12676,3 | 7838 | 7,2 | 5643,1 | 9397 | 6,85 | 6436,9 | 774 | 7,7 | 596.1 |
| Կարադոնլուի | 11014,0 | — | 11014,0 | 7,03 | 7773,0 | 7424 | 7,1 | 5271,0 | 3285 | 6,85 | 2250,2 | 305 | 7,6 | 231,8 |
| Ալի Բայրամլուի | 14069,0 | — | 14069,0 | 7,01 | 9855,6 | 8713 | 7,1 | 6186,2 | 4719 | 6,75 | 3185,3 | 637 | 7,6 | 484,1 |
| Ղազախի | 5593,0 | — | 5593,0 | 8,25 | 4615,9 | 4121 | 8,3 | 3420,4 | 1259 | 7,99 | 1005,9 | 213 | 8.9 | 189,6 |
| Թավուզի | 2876,0 | — | 2876,0 | 9.07 | 2608,9 | 1657 | 9.17 | 1519,5 | 1067 | 8,8 | 938.9 | 152 | 9,9 | 150.5 |
| Շամխորի | 7814,0 | 448 | 7366,0 | 8,87 | 6534,8 | 3804 | 9,0 | 3423;6 | 3439 | 8,7 | 2991.9 | 123 | 9,7 | 119,3 |
| Կասում Իսմայլովի | 8154,0 | — | 8154,0 | 9,45 | 7706,9 | 6603 | 9,6 | 6272,9 | 1480 | 9,2 | 1361.6 | 71 | 10,2 | 72,4 |
| Սամուխի | 2324.0 | — | 2324,0 | 9,43 | 2192,6 | 1815 | 9,6 | 1724,3 | 509 | 9,2 | 468,3 | — | — | — |
| Գյանջայի | 4593,0 | — | 4593.0 | 9,47 | 4350,3 | 3944 | 9,5 | 3746,8 | 585 | 8,2 | 538,2 | 64 | 10,2 | 63,3 |
| Աղդամի | 4568,0 | 108 | 4460,0 | 8,61 | 3839,5 | 3956 | 8,6 | 3402,2 | 314 | 8,3 | 260,6 | 190 | 9,3 | 176,7 |
| Թարթառի | 7135,0 | — | 7135,0 | 9,00 | 6421,5 | 6331 | 9,0 | 5697,9 | 629 | 8,75 | 550,4 | 175 | 9,9 | 173,2 |
| Բարդայի | 11837,0 | 753 | 11084,0 | 9,01 | 9986,2 | 10056 | 9,0 | 9050,4 | 712 | 8,75 | 623,0 | 316 | 9,9 | 313,8 |
| Աղջաբեդու | 7970.0 | — | 7970,0 | 9,97 | 7947,1 | 6297 | 10,0 | 6297,0 | 1463 | 9,7 | 1419,1 | 210 | 11,0 | 231,0 |
| Կարամարյանի | 3773,0 | — | 3773,0 | 8,12 | 3062,8 | 1592 | 8,27 | 1316,6 | 1969 | 7,91 | 1557,0 | 212 | 8,9 | 188,7 |
| Ջափար-Աբադի | 623,0 | — | 623,0 | 6,95 | 433,0 | 361 | 7,0 | 252,7 | 236 | 6,9 | 160.5 | 26 | 7,6 | 19,8 |
| Աղսուի | 1250,0 | 5 | 1245,0 | 8,19 | 1019,5 | 692 | 8,29 | 573,7 | 459 | 7,9 | 363,1 | 94 | 8,8 | 82.7 |
| Կարյագինի | 2359,0 | — | 2359,0 | 6,99 | 1650,2 | 2154 | 7,0 | 1507,7 | 172 | 16,8 | 117,0 | 33 | 7,7 | 25,4 |
| Ջեբրայիլի | 1209.0 | 73 | 1136,0 | 6,96 | 790,7 | 861 | 7,0 | 602,7 | 263 | 6,8 | 178,7 | 12 | 7,7 | 9,2 |
| Զանգելանի | 1100,0 | 30 | 1070,0 | 6.90 | 738,3 | 1070 | 6,9 | 738,3 | — | — | — | — | — | — |
| Կուտկաշենի | 1066,0 | — | 1066,0 | 7,97 | 849,2 | 347 | 8,11 | 281,4 | 705 | 7,8 | 555.5 | 14 | 8,8 | 12,3 |
| Ջրաբերդի | 3103,0 | — | 3103,0 | 8,39 | 2603,2 | 1459 | 8,53 | 1244,5 | 1503 | 88,2 | 1260.3 | 107 | 9,2 | 98,4 |
| Սաաթլինի | 6925,0 | 1593 | 5332,0 | 9,85 | 5253,6 | 2045 | 10,0 | 2045,0 | 3190 | 9,7 | 3000.9 | 184 | 10,8 | 198,7 |
| Նախիջևանի Խ. Ս. Հ. | 3450,0 | — | 3450,0 | 9,14 | 3153,6 | 1475 | 9,4 | 1386,5 | 1873 | 8,9 | 1692.1 | 85 | 10,0 | 85,0 |
| Ընդամենը | 200420.5 | 4008 | 193417,5 | 8.12 | 157023.6 | 121999 | 8,26 | 100786,1 | 44413,5 | 7.79 | 50181,8 | 7005 | 8,64 | 6055,7 |

3) Բամբակային սովխոզներում հնդավոր բամբակ քաղելու պլան հաստատել հետևյալ չափերով.—

| | | |
|---|---|---|
| Ստալինի անվան սովխոզ (Միլի) | — 9.173 | տոնն |
| Կարա-Զալա սովխոզ | — 5,462 | » |
| Ազիզբեկովի անվան սովխոզ | — 1.050 | » |
| Զաֆարխանի սովխոզ | — 500 | » |
| Հաշտարխան-Բազարի սովխոզ | — 225 | » |
| Բունյաթ-Զադեի անվան սովխոզ | — 182 | » |
| Ընդամենը | 17.132 | տոնն |

4) Անջրդի ռայոններում հնդավոր բամբակ քաղելու չափ սահմանել 1.173 տոնն, վորից կոլխոզային սեկտորում—748 տոնն և անհատական սեկտորում—425 տոնն:

5) Հաշվի առնելով, վոր մի շարք ռայոններում գերակատարված է պլանը պայմանագրված ցանքսի չափից ավելի, առաջարկել Հողժողկոմատին ու Զակխլոպկոմին, այդ ռայոնների համար լրացուցիչ բամբակ քաղելու ու հանձնելու պլան կազմել:

6) Կոլխոզային ու անհատական սեկտորներում ջրովի հնդավոր բամբակ գնելու յուրաքանչյուր ամսվա համար պլան սահմանել այսպես. սեպտեմբերին՝ 6—8 տոկոսը, հոկտեմբերին՝ 42—44 տոկոսը, նոյեմբերին՝ 43 տոկոսը և դեկտեմբերին՝ 7 տոկոսը:

Բամբակը քաղելն ու հանձնելը պետք է վերջանա դեկտեմբերի 15-ից վոչ ուշ:

7) Առաջարկել բամբակային ռայոնների բոլոր ռայգործկոմներին, վոչ ուշ քան մինչև սեպտեմբերի 1-ը՝ Հողժողկոմատի ռայոնական առաջադրությունների հիման վրա՝ ավարտել հնդավոր բամբակ քաղելու, գնելու և փոխադրելու տասնօրյա պլաններ կազմելու գործը և այդ պլանները հասցնել գյուղին, կոլխոզին և անհատական տնտեսությունները միացնող շինական ընկերություններին:

Կուլակային—ունևոր տնտեսությունների վերաբերմամբ առաջարկել ռայգործկոմներին, վոր խստիվ վորոշված ժամկետներ նշանակեն և թե ինչքան հնդավոր բամբակ պետք է հանձնեն գնման կետերին, համաձայն այն պարտավորման թղթերի, վոր նրանցից ստացված է բամբակի պայմանագրումը կատարելիս. հաստատուն առաջադրությունները չկատարողներին՝ անպայման դատական պատասխանատվության յենթարկել:

Հանրապետության դատախազությունը պետք է այդպիսի գործերի հերթից դուրս քննություն ապահովի:

Պարտավորեցնել մեքենա տրակտորային կայաններին, վոր ռայկոմների ու ռայգործկոմների հետ միասին առանձնապես հսկողություն սահմանեն, թե կուլակային—ունևոր տնտեսություններն ինչպես են կատարում հաստատուն առաջադրությունները:

8) Առաջարկել կոլխոզցենտրին, վոր բամբակաքաղի ու աշնան ցանքսային կամպանիայի ժամանակաշրջանի համար՝ անհապաղ տեղերն ուղարկի կոլխոզների աշխատելու ձևերի—բլանկներ, վորոնց հիման վրա ռայգործկոմներն ու ռայկոլխոզմիությունները մինչև բերքահավաքի աշխատանքների սկիզբը պետք է բոլոր բամբակային ոլխոզներում աշխատելու պլան կազմելն ապահովեն՝ դրա համար մոբիլիզացիայի յենթարկելով բոլոր ագրո-գործիչներին ու տեղական ակտիվը (ուսուցչություն, գյուղատնտեսական դպրոցների և տեխնիկումների ունկնդիրներ):



9) Ադրկոմկուսի (բ) կենտրոնական կոմիտեն ու Ադրժողկոմխորհը առանձնապես շեշտում են մեքենա-տրակտորային կայանների առաջընթաց դերը հնդավոր բամբակը քաղելու, մթերելու և փոխադրելու գործում, վոր սակայն ամենափոքր չափով չի ազատում պատասխանատվությունից ռայկոմներին ու ռայգործկոմներին, վորոնք պարտավոր են մեքենա-տրակտորային կայաններին ամեն տեսակ ողնություն ցույց տալ՝ նրանց կատարած աշխատանքում:

Առաջարկել բամբակային ռայոնների ռայկոմներին ու ռայգործկոմներին ու մեքենա-տրակտորային կայաններին, վոր կոլխոզների աշխատանք կատարելու պլանների ու անհատական սեկտորի վերաբերմամբ արված համապատասխան հաշիվների՝ վոչ ուշ քան մինչև այս տարվա սեպտեմբերի 10-ը բամբակաքաղի ժամանակամիջոցի և աշնան ցանքսային կամպանիայի համար ռայոնի աշխատանքային հաշվեկշիռը կազմեն՝ ըստ գյուղերի ու միաժամանակ առանձին կետերում բանվորական ուժի վերաբերմամբ յեղած լարվածությունը մեղմացնելու կոնկրետ միջոցառումների պլանը մշակեն (տրակտորների ու կցան ինվենտարի կենտրոնացում՝ ցանքսային աշխատանքներ տանելու համար, բանվորական ուժեր հասցնել մի տեղից մյուս տեղ, միջկոլխոզային ու հասարակական բուքսիրներ և այլն):

10) Բանվորական ույժ հավաքագրելու համար՝ սովխոզների տրամադրության տակ դնել հետևյալ ռայոնները.

Կարա-Զալա սովխոզին

| | | | |
|---|---|---|---|
| Աղսուի | ռայոնը | 1000 | հոգի. |
| Մարազիյի | » | 500 | » |
| Շամախու | » | 700 | » |
| Գյոյնուքի | » | 500 | » |
| Կախի | » | 2.000 | » |
| Վարդաշենի | » | 600 | » |
| Զաֆարաբադի | » | 700 | » |

Ազիզբեկովի անվան սովխոզին

| | | | |
|---|---|---|---|
| Մասսալուի | ռայոնը | 900 | հոգի |

Անջրդի սովխոզին

| | | | |
|---|---|---|---|
| Հաշտարխան-Բազարի | ռայոնը | 900 | հոգի |

Զաֆարխանի սովխոզին

| | | | |
|---|---|---|---|
| Կարամարյանի | ռայոնը | 435 | հոգի |

Ստալինի անվան սովխոզին (Միլի)

| | | | |
|---|---|---|---|
| Կարյագինի | ռայոնը | 1300 | հոգի |
| Ջիբրայիլի | » | 1500 | » |
| Լաչինի | » | 1000 | » |
| Զանգելանի | » | 500 | » |
| Կուբաթլուի | » | 1200 | » |
| Շուշվա | » | 900 | » |
| Բելբաջարի | » | 1000 | » |
| Ղազախի | » | 500 | » |
| Գետաբեկի | » | 500 | » |
| Շամքորի | » | 500 | » |
| Լեռնային Ղարաբաղը | | 1000 | » |

Առաջարկել բամբակային սովխոզների դիրեկտորներին, վոր մասնանշված ռայոնների ռայգործկոմների ու ռայկոմների հետ միասին՝

БИБЛИОТЕКИ ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академия Наук СССР

ՀՍՍՌ-Арм ССР

սեպտեմբերի 15-ից վոչ ուշ ավարտեն բամբակաքաղի կամպանիայի ժամանակաշրջանի համար բանվորական ույժ տալու վերաբերմամբ կոլխոզների հետ պայմաններ կնքելու գործը:

12) Անհրաժեշտ համարել, վոր արդեն գոյություն ունեցող գնման կետերի վրա լրացուցիչ կետով՝ մինչև բերքահավաքի սկիզբը, Ջրովի բամբակային ռայոններում հետևյալ գնման կետերն ավելացվեն՝

ա) Կարա-Ջալա սովխոզ.

բ) Շարժական կետ Քուռ գետի ձախ ափին (Ախտաչեյի գնման կետից) Մինիման և Իլլարյոնովկա գյուղերից հնդավոր բամբակ ընդունելու համար.

գ) Ուլաջանլու (Սաբիր-Աբադի ռայոն).

դ) Փիրազեյի ռայոն (Աղդաշի ռայոնի Քուռի ափից մոտի կետին).

ե) Խալդան—վերջնական հաշիվ տեսնելով ու հաց տալով.

զ) Ջեզամ—վերջնական հաշիվ տեսնելով և հաց տալով.

է) Դոլլար—վերջնական հաշիվ տեսնելով և հաց տալով.

ը) Թավուզ—վերջնական հաշիվ տեսնելով և հաց տալով.

թ) Բոյուք-Կասում—վերջնական հաշիվ տեսնելով և հաց տալով.

ժ) Միջևան (Զանգելանի).

13) Առաջարկել Հողժողկոմատին, Կոլխոզցենտրին և բամբակային ռայոնների բոլոր ռայգործկոմներին՝ բամբակաքաղի ժամանակ ապահովելու հանրապետության բոլոր բամբակային կոլխոզներում գործարքային աշխատանքի ու աշխատօրերի ճիշտ հաշվառման իրականացումը.

15) Առաջարկել ռայգործկոմների նախագահներին, վոր իրանց անձնական պատասխանատվությամբ արագացնեն ներքև հիշվող ճանապարհների նորոգումը՝ բամբակը փոխադրելու համար՝ նորոգումը վերջացնելով այս տարվա սեպտեմբերի 15-ից վոչ ուշ ու

ա) Աղջաբադու ռայգործկոմը՝ Հինտարխ-Աղջաբադի-Գյավուր-Արխ ճանապարհները.

բ) Աղդամի ռայգործկոմը՝ Ղարբանդ—Խնդիրիստան ճանապարհը.

գ) Բարդու ռայգործկոմը՝ Շիրվանլու—Ալփավութ—Ղլիջլու ճանապարհը.

դ) Ջրաբերդի ռայգործկոմը՝ Թարթառ—Մուրղուշևան ճանապարհը.

ե) Գյանջայի և Սամուխի ռայգործկոմները—Գյանջա—Կարասախկալ—Լյուքսեմբուրգ ճանապարհը.

զ) Գյոգչայի ռայգործկոմը՝ Ուջար—Զարդոբ ճանապարհը.

է) Աղդաշի ռայգործկոմը՝ Լյաքի—Փիրալի ճանապարհը.

ը) Ղարադոնլուի ռայգործկոմը՝ Ղարադոնլու—Ցամբղլի կայարան.

թ) Քյուրդամիրի ռայգործկոմը՝ Քյուրդամիր—Մոլլաքյանդ ճանապարհը:

16) Առաջարկել Ազգորտրանսին, վոր շտապեցնի հանրապետական նշանակություն ունեցող ճանապարհների և կամուրջների շինարարությունն ու նորոգումը, վորոնք են—

Քյոչառլու—Հինդարխ,

Աղդամ—Հինդարխ,

Լյաքի—Աղդաշ—Կուտկաշեն,

Սալյան—Պուշկինո-Բելասվար—Կարյագին—Հորադիզ,

այն հաշվով, վոր բոլոր աշխատանքները վերջանան այս տարվա սեպտեմբերի 15-ից վոչ ուշ. ինչպես և մինչև սեպտեմբերի 25-ն ավարտել տեղական նշանակություն ունեցող Աղջաբադի—Նաջաֆ-Կուլիբեյլի ճանապարհի կառուցումը:



17) Խնդրել Անդրկովկասյան Ժողկոմխորհին՝ առաջարկելու Զակսովխոզլոպկին, վոր անհապաղ պայմանագիր ստորագրի Ազգորտրանսի հետ և միջոցներ բաց թողնի Կարա-Ջալայի, Միլի և Ազիզբեկովի սովխոզներում միջսովխոզային ճանապարհներ շինելու համար:

18) Առաջարկել բամբակային ռայոնների ռայգործկոմներին, վոր մինչև սեպտեմբերի 10-ը ապահովեն գյուղական բնակչության ունեցած բոլոր փոխադրական միջոցների նորոգման ավարտումը և բերքահավաքի ու մթերման կամպանիայի ժամանակաշրջանում նրանց ոգտագործման օրացույցային պլանը մշակեն մեքենա-տրակտորային կայանների հետ միասին:

Առաջարկել ռայգործկոմներին, վոր ամենից առաջ մոբիլիզացիայի յենթարկեն կուլակային-ունևոր տնտեսությունների ամբողջ տրանսպորտը՝ հնդավոր բամբակը գնման կետերն ու գործարանները փոխադրելու համար, նրանց աշխատանքի համար վճարելով Զակխլոպկոմի սահմանած գնահատումներով, անհրաժեշտության դեպքում կանգ չառնելով բնակչության փոխադրական միջոցների ընդհանուր մոբիլիզացիայի առաջ:

19) Առաջարկել Հողժողկոմատին, վոր ներգրավելով Զակխլոպկոմին՝ կազմի և Պետպլանի միջոցով Ժողկոմխորհին ներկայացնի բամբակի փոխադրական ծավալուն պլանը, այդ պլանում նախատեսնելով Քուրի և Արաքսի գետային տրանսպորտի ամենամեծ չափերով ոգտագործումը:

20) Կանանց աշխատանքն ամենամեծ չափերով բերքահավաքի աշխատանքներին քաշելու համար՝ առաջարկել Առողջժողկոմատին, վոր Պրոֆմիությունների Ադրբեջանի Խորհրդի ու Կոլխոզցենտրի հետ միասին՝ բոլոր խոշոր բամբակային կոլխոզներում մանկամսուրներ կազմակերպի և այդ շինարարությունը ձեռնարկի սեպտեմբերի 20-ից վոչ ուշ և վոչ պակաս 200-ից:

Առաջարկել Ֆինժողկոմատին՝ այդ մսուրները պահելու համար բաց թողնել 400,000 ռուբլի:

21) Առաջարկել հանրապետության Հողժողկոմին ու դատախազին՝ 2 որվա ընթացքում Ժողկոմխորհին ներկայացնել՝ բամբակի արտերն արածացնողների դեմ պայքարելու վորոշման նախագիծը՝ քննելու և հաստատելու համար:

22) Առաջարկել Մատակարարման ժողկոմատին ու Ազերիտտիֆակին, վոր անհապաղ հատկացնի ու բամբակային ռայոններն ուղարկի արդյունաբերական ու պարենային ապրանքներ, ապահովելով բամբակ ցանողներին այդ ապրանքների մատակարարումը, նայած թե նրանք ինչպես են կատարել պայմանագրությամբ իրանց վրա վերցրած պարտականությունները:

23) Անդրժողկոմխորհի վորոշման համաձայն՝ բամբակ ցանողների հետ հաշիվ տանելու համար՝ 1931 թվի հնդավոր բամբակի վերաբերյալ հետևյալ տեսակներն ու գները սահմանել.

1-ին տեսակը—78 տոկոս, գինը 5 ռ. 11 կ. փութը,
2-րդ տեսակը—12 տոկոս, գինը 4 ռ. 75 կ. փութը,
3-րդ տեսակը—10 տոկոս, գինը 4 ռ. 37 կ. փութը,

Վերջին տեսակի բամբակն ընդունել կիլոգրամը—25 կոպեկ:

24) Առաջարկել Պրոֆմիությունների Ադրբեջանի Խորհրդին, Ադրլենկոմյերիտմիության Կենտրոնական Կոմիտեին, Լուսժողկոմատին, Ազերիթտիֆակին, Կոլխոզցենտրին ու Բագշեֆխորհրդին, 2 որում մշակելու և Կենտրոնական Կոմիտեի քարտուղարությանը ներկայաց-

19.182

նելու այդ կազմակերպությունների բամբակաքա[illegible] մասնակցելու պլանը՝ քննելու և հաստատելու համա[illegible]

25) Առաջարկել մամուլի հանրապետական և ռայոնական որգաններին՝ լայն կամպանիա ծավալել հնդավոր բամբակը հավաքելու նախապատրաստման, բերքահավաքի ու մթերման հարցերի շուրջը և տեղերում այդ աշխատանքների ընթացքի սիստեմատիկ լուսաբանումը կազմակերպել։

26) Պարտավորեցնել մեքենա-տրակտորային կայանների ու բամբակի գործարանների դիրեկտորներին, վոր սեպտեմբերին 5 որը մեկ, իսկ հոկտեմբերի 1-ից սկսած՝ ամեն որ հեռագրական ու փոստով տեղեկություններ հաղորդեն հնդավոր բամբակը քաղելու և մթերելու ընթացքի մասին։

27) Առաջարկել Կենտրոնական Կոմիտեի ագիտմասսբաժնին, վոր բամբակային ռայոններում մասսայական աշխատանք ծավալելու պլան մշակի և Կենտրոնական Կոմիտեի քարտուղարության քննությանը ներկայացնի յուրաքանչյուր ռայոնի լիազորների ու բրիգադների կազմը, վորոնք պետք է մնան տրված ռայոնում մինչև բերքահավաքի կամպանիայի վերջը։

28) Բոլոր հիմնական ցուցանիշներով բամբակաքաղի կամպանիայի պլանը հաջողությամբ կատարած ու գերակատարած ռայոններին պրեմիա տալու համար՝ 5 մարդատար և 5 ել մեկուկես տոննանոց ավտոմոբիլ հատկացնել։

Առաջարկել Հողժողկոմատին՝ տասն որում մշակել և հրապարակել պրեմիա տալու պայմանները։

29) Առաջարկել Կենտրոնական Կոմիտեի Ագիտմասսբաժնին ու Կուլտպրոպբաժնին ու Ազերնեշրին, տպագրել 3 լեզվով ՎԵԿԱՊԵ-ի (բ) Անդրյերկրկոմի և Ադրկոմկուսի (բ) Կենտրոնական Կոմիտեի ու Խորհ. Ադրբեջանի Ժողկոմխորհի վորոշումներն առանձին պլակատներով ու գրքույկներով և ուղարկել բոլոր բամբակային ռայոնները։

Ադրկոմկուսի (բ) Կենտրոնական Կոմիտեն ու Ադրբեջանի Ժողկոմխորհն առաջարկում են բոլոր կենտրոնական ու ռայոնական կուսակցական, խորհրդային, կոմյերիտական ու պրոֆմիութենական կազմակերպություններին, վոր մոտակա ժամանակի ընթացքում իրանց ուշադրությունը կենտրոնացնեն բամբակաքաղի ու բամբակի մթերման աշխատանքի վրա։

Մատնանշելով բերքահավաքի կամպանիայի ժամանակ կոլխոզների կազմակերպչական-տնտեսական ամրապնդման ապահովման ու այդ հիման վրա կոլխոզային շարժման հետագա աճման կարևորությունը, Կենտրոնական Կոմիտեն ու Ժողկոմխորհը վճռականապես նախազգուշացնում են՝ չարհամարել ու չմոռանալ անհատական սեկտորը, և առաջարկում են վճռական կռիվ մղել բամբակաքաղի կամպանիայում անհատական սեկտորը թերագնահատելու և կոլխոզ մտնելու համար նրանց շարքերում համառ աշխատանք ծավալել չցանկանալու դեմ։

Անպայման 175.500 տոնն բամբակ քաղելու և մթերելու պլանը կատարելու համար պայքարը պետք է ծավալել յերկու ֆրոնտի վրա, ամենից առաջ կուլակային վտանգն ոպորտունիստորեն մոռանալու, ինքնահոսի տրամադրությունների, դեմոբիլիզացիայի և կուլակության դիրքերն ամրապնդող «ձախ» վտանձգությունների դեմ։

Խորհ. Ադրբեջանի Ժողկոմխորհի նախագահ Դ. Բունյաթ-Զադե

Ադրկոմկուսի (բ) Կենտրոնական Կոմիտեի քարտուղար Պոլոնսկի

ՀՍՍՌ-Арм ССР
им. А. Мясникяна